

Արձանագրություն հ.1

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
24.02.16 թ. կայացած նիստի:

Նիստն ներկա էին գիտխորհրդի 36 անդամներից 31-ը:

Օրակարգում՝

1. Գիտական զեկուցում <<ՀՀ տնտեսության զարգացման որոշ հարցերի շուրջ>> (զեկուցող՝ տ.գ.թ., պրոֆ. Վ.Հովսեփյան):
2. Նոր ընդունված հեռակա ուսուցմամբ ասպիրանտների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:
3. Կուրսատորների հաշվետվություն:
4. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցեց տ.գ.թ., պրոֆ. Վ.Հովսեփյանը:

Նա ասաց, որ իր ելույթը պայմանավորված է նրանով, որ իր նախաձեռնությամբ նամակով դիմել է ՀՀ նախագահ Ս.Սարգսյանին, խնդրելով ընդունելություն, որի ընթացքում նա կներկայացնեի իր նկատառումները: Նա դեռևս ընդունելության առաջարկ չի ստացել, բայց որովհետև ֆակուլտետի ղեկան, պրոֆ. Հ.Սարգսյանը նրան առաջարկել է զեկուցել գիտական խորհրդում, դրա համար նա այժմ ելույթ է ունենում:

Իր դիմումում նա իր մտահոգություններն է արտահայտել տնտեսությունում չօգտագործված հնարավորությունների կիրառման վերաբերյալ, որոնք իր կարծիքով, կակտիվացնեն տնտեսության զարգացումը: Մասնավորապես պետք է ավելանան տնտեսական աճի տեմպերը, երկրում աղքատությունը հաղթահարելու և արտագաղթը կրճատելու համար տնտեսական աճի ներքին սահմանը պետք է լինի առնվազն 7 տոկոս: Անդրադառնալով երկրի նախագահի ելույթին, նա ասաց, որ այդ ցուցանիշը առկա է նաև նրա վերջին ելույթում: Նա նշեց նաև կառավարչական ապարատի ծախսերի հնարավոր կրճատման մասին:

Արտահայտվեցին՝

Վ.Բոստանջյան. Մեր երկրի ամեն մի քաղաքացի իրավունք ունի մտահոգվելու երկրի տնտեսական վիճակի մասին: Երբևիցե մեղավոր չպետք է փնտրել մեկ անձի մեջ: Մենք բոլորս ենք պատասխանատվություն կրում: Այս դահլիճում կա պրոֆեսիոնալ զգալի ներուժ և ես մտածում եմ, որ պրոֆ. Հովսեփյանի զեկուցումը

կրնդունենք, թե չենք ընդունի, պետք է կարողանալ մի ընդհանուր հայտարարի բերել մեր ֆակուլտետում առկա գիտական միտքը, որի հիմնական գործառույթը պետք է լինի մատնանշել երկրի զարգացման հիմնական ուղիները և միջոցները:

Գ.Ղարիբյան. Բարձրացված հարցը բոլորիս է վերաբերվում: Նախագահն իր վերջին ելույթում բավականին խորությամբ ներկայացրեց երկիրը ծանր վիճակից դուրս բերելու մտահոգությունները, որոնցից հիմնականը ազգային անվտանգության խնդիրն է: Ներկա պահին երկու կուսակցություններն իրենց վրա վերցրեցին երկրի տնտեսական զարգացման պատասխանատվությունը: Ուրախալի է, և համոզված ենք, որ մեր ֆակուլտետի շրջանավարտը, ներկայումս ֆակուլտետի գիտխորհրդի անդամը, տնտեսագիտության թեկնածու Արծվիկ Մինասյանը էկոնոմիկայի նախարարի իր պաշտոնում կնպաստի երկրի տնտեսության զարգացման բարելավմանը:

Հ.Սարգսյան. Նախօրոք հայտարարված էր, որ գիտխորհրդում պետք է լսենք գիտական զեկուցում, այլ ոչ թե նախագահի ելույթի վերաբերյալ կարծիքներ: Պետք է փաստարկվեին բարձրաձայնված առկա բացասական իրավիճակների հիմնավորումները: Այլապես ստացվում է, որ տնտեսական համակարգին տրվող գնահատականները բազմազան են, որոնք հնչում են առօրյա կյանքի ամեն մի քայլափոխին: Նախագահն իր ելույթում շատ լուրջ հայտարարություն արեց, որ ժամանակակից պայմաններում մենք ստիպված ենք այլ ուղիներ փնտրել: Մեր մտահոգության առարկան պետք է դառնա, թե ի՞նչ ուղիներ առաջարկել և դրանք հիմնավորել տնտեսագիտորեն: Ես համարում եմ, որ գիտական զեկուցում ներկայցնելիս, ավելի լուրջ մոտեցում պետք է ցույց տալ և ավելի պատասխանատու պետք է լինել:

Ա.Մինասյան. Կուզենայի Ձեր ուշադրությունը հրավիրել մի քանի շեշտադրումների վրա, նկատի ունենալով այն հնարավորությունները, որ բացվում են տնտեսագիտական համայնքի համար: Մեր հետագա գործունեության ընթացքում կարևորվում են երկու հիմնական հենասյուներ, դրանք են շուկայական մեխանիզմների կատարելագործումը և ակտիվ սոցիալական պաշտպանության համակարգի ամրապնդումը: Պետք է շարժվել „զարգանալ –չզիջելով“, բանաձևով: Մի կողմից պետք է փնտրել գիտատար ճյուղեր և մյուս կողմից ուղիներ՝ նոր տեխնոլոգիաները Հայաստան ներկրելու համար:

Մենք պարտավոր ենք և կարող ենք դաս քաղել իրավիճակից: Մենք պետք է ավելի ակտիվ մասնակցություն ունենանք երկրի տնտեսական զարգացման քաղաքականության մշակման գործընթացներում: Շնորհակալ եմ, հուսով եմ կհամագործակցենք և կաշխատենք միասին:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնների վարիչները, ովքեր ներկայացրեցին իրենց ամբիոնների նոր ընդունված հեռակա ասպիրանտների

համար երաշխավորվող ատենախոսությունների թեմաները և գիտական ղեկավարներին:

Որոշեցին հաստատել ամբիոնների որոշումները, որոշակի ճշգրտումներ մտցնելուց հետո:

Թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին որոշումները ուղարկվում են ասպիրանտուրայի բաժին, իսկ մեկ օրինակները պահվում են մեր թղթապանակներում:

Օրակարգի 3-րդ հացի շրջանակներում լսեցին ըստ ամբիոնների կցված կուրատորների հաշվետվությունները:

Որոշեցին ընդհանուր առմամբ նրանց աշխատանքը համարել բավարար:

Որոշեցին հաստատել ուսումնական խորհրդատուի /կուրատորի/ աշխատանքների կազմակերպման կարգը, որտեղ կանոնակարգված են նրանց պարտականությունները և իրավունքները:

Ընթացիկ հարցերի շրջանակում`

1. Որոշեցին երեք աշխատություններ երաշխավորել հրատարակման:
2. Հավանություն տալ հեռակա ուսուցմամբ բակալավրիատի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությանը (նախագահ` Ա.Մինասյան)

Գիտխորհրդի նախագահ,
տ.գ.դ., պրոֆեսոր

Հ. Լ. Սարգսյան

Գիտխորհրդի քարտուղքար,
տ.գ.թ., դոցենտ

Ա. Հ. Համբարձումյան